ԱԾԱԿԱՆԻ ԶՈՒԳՈՐԴԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Է. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ածական անունները՝ գոյականներից հետո բառերի ամենամեծաքանակ խումբը, ուսումնասիրվել և ուսումնասիրվում են քերականական և իմաստային տեսանկյուններից։ Սակայն իմաստային զուգորդելիության առումով այս խոսքի մասը ուսումնասիրության հատուկ առարկա է սկսում դառնալ միայն վերջին երկու տասնամյակներում։ Ավելի ու ավելի հաճախակի են տպագրվում աշխատություններ՝ նվիրված այն զուգորդումներին, որոնց գլխավոր բաղադրիչը ածականն է։ Դրանցում հիմնականում ուսումնասիրվում են գլխավոր բաղադրիչի՝ ածականի քերականական և իմաստային բնույթը, հաստատվում են զուգորդելիության կառուցվածքային օրինաչափություններ, երևան են բերվում այն գործոնները, որոնք պատճառ են դառնում ազատ զուգորդելիությունների անցմանը դարձվածքների և այլն։

Ակադեմիկոս Վ. Վ. Վինոգրադովը զուգորդելիության չափանիշը օգտագործում է բառային նշանակությունների տիպերի տարբերակման համար։ Նա գտնում է, որ բառի նշանակությունը դրսևորվում է այն դեպքում, երբ այն զուգորդվում է որոշակի բառերի հետ, այսինքն՝ դրսևորվում է իմաստային հարաբերությունների նեղ ոլորտում, որ իմաստները և իմաստային երանգները մեծ մասամբ պայմանավորված են շրջապատով[1]։

Վ. Ադմոնին քերականական զուգորդելիությունը մեկնաբանում է իբրև որոշակի կարգի բառերի կամ բառաձևերի՝ որևէ այլ կարգի բառերի կամ բառաձևերի հետ զուգորդվելու պոտենցիալ կարողություն։ Նա տարբերակում է պարտադիր և ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) զուգորդելիություն[2]։ *Պարտադիր զուգորդելիությունը պահանջում է անհրաժեշտ, անմիջական միացում մի ուրիշ միավորի հետ։ Օրինակ՝ «Սրանք այծի պոզերի պես* անբաժան են իրարից» *(ԲՀՍՋ, էջ 215)*[3]։ *Ոչ պարտադիր զուգորդելիությունը անմիջականորեն չի պահանջում ինչ-որ այլ միավորի առկայությունը։*

Պարտադիր և ոչ պարտադիր զուգորդելիությանը անդրադառնում է նաև Յու. Ապրեսյանը[4]։ *Պարտադիր դիրքը (որ նույնն է, ինչ զուգորդելիությունը) այն դիրքն է, որ չի կարելի կրճատել (հեռացնել) առանց նախադասության ճշտությունը խախտելու. «Որը ամբողջ քաղաքակիրթ աշխարհին* հայտնի է *Արշիլ Գորկի մականվամբ» (ԳԹ, 5. I. 1971)։*

---

1 «Вопросы языкознания», 1953, № 5, стр. 17.

2 «Вопросы языкознания», 1958, № 8, стр. 20.

3 *Հոդվածում օգտագործված են հետևյալ համառոտագրությունները՝ ԲՀՍՋ— Բագիշ Հովսեփյան, «Սերմնացանները չվերադարձան», ԳԹ «Գրական թերթ», Գ— «Գարուն» ամսագիր, Լ.Զեժ— Եղիշե Զարենց, «Երկերի ժողովածու»։*

4 Ю. Д. Апресян, Экспериментальное исследование семантики русского глагола, М., 1967.

Այս դեպքում հեռացնելով «մականվամբ» բառը՝ մենք կխախտենք տվյալ նախադասության ճշտությունը, և այն կմնա անավարտ։

Նույն բանը տեղի կունենա, եթե հեռացնենք to the beauty մասը He was blind to the beauty of nature (նա կույր էր բնության գեղեցկության հանդեպ) նախադասության մեջ։ Այն անավարտ, անհասկանալի կլինի առանց հիշյալ մասի, որը պահանջում է blind («կույր») ածականը։

Ոչ պարտադիր դիրքը դա այն դիրքն է, որը կարելի է կրճատել առանց նախադասության ճշտությունը խախտելու. «Երիտասարդ արձակագիրը չափազանց շռայլ է իր խոսքի մեջ» (Գ, 5—6, 1971, էջ 112)։

Այստեղ, կրճատելով «չափազանց» մակբայը, մենք չենք խախտում նախադասության ճշտությունը։

Բառերի միջև պարտադիր և ոչ պարտադիր կապի առկայությունը բնորոշում է տվյալ շարահյուսական կառույցի, իբրև կառուցվածքային ամբողջության, էությունը։ Այս սկզբունքի կիրառումը թույլ է տալիս որոշել այս կամ այն կառույցի ավարտվածության աստիճանը։

Պարտադիր կառույցների լավագույն օրինակներ են այն զուգորդումները, որոնք ընդգրկում են իրենց մեջ բառեր՝ օժտված այսպես կոչված «ուժեղ» խնդրառությամբ։

Տվյալ կառույցը լինում է իմաստային տեսանկյունից ոչ լրիվ, եթե պակասում է գլխավոր բառի կողմից պահանջվող անդամը։ Օրինակ՝ «Դուրս բաց է. դուրս բաց է ձեզ համար» (ԵՁԵԺ, էջ 8)։

Կառուցվածքային պարտադրականությունը, ինչպես նաև կառուցվածքային ֆակուլտատիվությունը, երևան են գալիս շարահյուսական միավորի շրջապատում։ Նրանց հիմքում ընկած են տվյալ կառույցը կազմող միավորների հատկությունները։ Բաշխումը, ինչպես հայտնի է, տվյալ միավորին հատուկ շրջապատների ընդհանուր գումարն է։ Սակայն բաշխման այս բնութագրումը բավարար է միայն շարացուցային ընդհանուր բնորոշման դեպքում։ Սակայն շարակարգային վերլուծության ժամանակ կարևոր է շրջապատի բնութագրման հարցը, այսինքն՝ այն պատճառը, որը տվյալ շրջապատը դարձնում է պարտադիր կամ ոչ պարտադիր։

Զուգորդելիության կաղապարում «դատարկ տեղերի» լրացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։ Միավորների բաշխումը ձևավորվում է երկու տիպի շրջապատով։ Շրջապատը կարող է լինել պարտադիր և ոչ պարտադիր, այսինքն՝ տվյալ ձևը կարող է առկա լինել պարտադիր կամ ոչ պարտադիր կերպով։ Կիրականանա թե չի իրականանա տվյալ ձևի պոտենցիալ կարողությունը, կախված է այնպիսի հանգամանքներից, որոնք նախադասության սահմաններից դուրս են։ Այն որոշվում է ասույթի բովանդակության և հաղորդակցման խնդիրներով։ Օրինակ՝ «Նա ուժգնորեն փակեց դուռը իր ետևից»։

«Փակեց» բառի շրջապատը այս նախադասության մեջ, բացի ենթակայից և ուղիղ խնդրից, պահանջում է նաև նախադասության այլ անդամներ։ Ուղիղ խնդրի առկայությունը թելադրվում է տվյալ բայի իմաստով և կազմում է «փակեց» բայի պարտադիր շրջապատը։ Իսկ նախադասության մյուս անդամների առկայությունը միայն հավանական է դառնում «փակեց» բայով։ Դրանց կրճատումը չի ազդի նախադասության քերականական կառուցվածքի վրա։

Կառուցվածքային տեսակետից սրանք ոչ պարտադիր անդամներ են։ Օրինակ՝ «Նա փակեց դուռը»։

Զուգորդելիության վերլուծությունը, ելնելով շրջապատից, որոշ չափով տարբերվում է բառերի արժութային հարաբերություններից և բաշխական վերլուծությունից։ Այսպիսի վերլուծության ժամանակ ուսումնասիրվում են բառերի այն ստույգ կապերը, որոնք գտնվում են շրջապատի դիրքում։

Շրջապատի մասին շատ պարզ է խոսել Ա. Խոլոդովիչը[5]։ Շարահյուսական կամ ձևակցային արժութայնության գաղափարը նա բանաձևում է շրջապատի վերլուծության հիման վրա։ Ըստ Խոլոդովիչի՝ շրջապատի մեջ չի մտնում ինչոր ձևական բառ. անհրաժեշտ է միայն տրամաբանական նշանակություն։

Այս իմաստով անգլերենի ածականի զուգորդելիությունը ուսումնասիրել է Ի. Շուտնիկովան[6]։ Այստեղ ուսումնասիրված են ածականի իմաստային զուգորդումները։ Զուգորդելիության յուրաքանչյուր կաղապարի իմաստային հագեցվածության հնարավորությունների հիման վրա եզրակացվում են տվյալ դասի բառերի տիպական արժութային հատկությունները։

Հետաքրքրական վերլուծություն է կատարում նաև Վ. Տիմոֆեևը[7], որի կարծիքով ածականները գոյականի իմաստային խմբերի նկատմամբ օժտված են ընտրողության հատկությամբ։ Ամուրի ածականը օգտագործվում է միայն արական սեռի գոյականների հետ, անասող-ը միայն երկինք, գիշեր գոյականների հետ և այլն։

Ներկա հոդվածում, ուսումնասիրելով ածականների զուգորդելիությունը, մենք հաշվի ենք առնում ոչ միայն նրանց շարահյուսական կապերը, այլև այն լեզվական միավորների (գոյականների) իմաստը, որոնց հետ նրանք զուգորդվում են։ Այստեղ ելակետային է ածականների ընտրողության հատկությունը։ Լեզվի մեջ ածականը գործում է գոյականի հետ միասին։ Ածականների շարահյուսական կապերի ուսումնասիրության ժամանակ ընդհանրապես ուշադրություն չի դարձվում նրանց իմաստային շրջանակների սահմանափակման հարցին։ Կապի շարահյուսությունը մատնացույց չի անում, թե իմաստային ինչ նեղ խմբերի հետ է կապված ածականը։ Այստեղ ածականները խմբավորվում են ըստ այն հատկանիշի, թե գոյականի իմաստային ինչպիսի խմբերի հետ կարող են նրանք զուգորդվել։

Վերցնենք, օրինակ, երկու ածական՝ ուտելի և վաղաժամ։ Սրանք զուգորգվում են գոյականի իմաստային տարբեր խմբերի հետ։

Ուտելի < սունկ, կանաչի

վաղաժամ < մահ, ծննդաբերություն

«Ուտելի» ածականը զուգորդվում է նյութական առարկայի իմաստ արտահայտող գոյականների հետ։ «Վաղաժամ» ածականը այդ իմաստային խմբի հետ չի զուգորդվում։ Նա զուգորդվում է վերացական առարկայի իմաստ ունեցող գոյականների հետ։

Տվյալ պրոբլեմը հնարավոր է ուսումնասիրել շրջապատի վերլուծությամբ։

---

5 А. Холодович, Опыт подкласса слова, «Вопросы языкознания, 1960, № 2, стр. 27.

6 И. Шутникова, Опыт исследования сочетаемости прилагательного в современном английском языке, *թեկնածուական դիսերտացիա։*

7 «Вопросы языкознания», 1969, № 2, стр. 34.

Այս հոդվածում ուսումնասիրվում են ածականի և գոյականի ներքին կառուցվածքային կապերը, և որոշվում են գոյականի իմաստային այն կարգերը, որոնք ածականի նկատմամբ գրավում են շրջապատի դիրք։ Ածականի շարահյուսական զուգորդելիությունը ուսումնասիրվում է ձևակցության մեջ, որը բաղկացած է ածականից՝ իբրև միջուկից, և նրա շրջապատից՝ գոյական անունից։ Ձևակցությունները դուրս են բերվում նախադասություններից բավարար և անհրաժեշտ կապի հիման վրա, որը կոչվում է կառուցվածքային կապ ածականի և գոյականի միջև։ Ածականի և գոյականի նման զուգորդելիությունը կարող է հանդես դալ տարբեր հոլովներով, իսկ ձևակցության մեջ այդ զուգորդելիությունը ուսումնասիրվում է ուղղական հոլովով և եզակի թվով։ Ձևակցությունը ստեղծվում է ստույգ կառուցվածքային հիմքի վրա, այսինքն՝ ածականի և գոյականի էական (ռելևանտ) կապի հիման վրա։ Այն զուգորդումները, որոնք կազմվում են կամ ստեղծվում են իրադրական-կառուցվածքային կամ անհատական-իրադրական, այսինքն՝ ոչ էական կապի հիման վրա, ձևակցություն չեն կազմում։

Այս դրույթը պարզաբանելու համար բերենք մի քանի օրինակ։ Ժամանակակից հայերենում սրամիտ ածականը գործածվում է հետևյալ գոյականների հետ՝ զրուցակից, ուսանող, ենթադրություն, կռահում և այլն։

Ստույգ կառուցվածքային կապի տեսանկյունից այս գոյականները բավական չեն կառույցներ կազմելու համար։ Այսպիսով, «սրամիտ» ածականը զուգորդվում է գոյականների երկու իմաստային խմբերի հետ՝

1. Այն գոյականների հետ, որոնք անվանում են անձ։

2. Այն գոյականների հետ, որոնք անվանում են վերացական առարկա։

«Բնությունից սրամիտ» զուգորդելիությունը ստացված է իրադրական-կառուցվածքային կապի հիման վրա։ Ձևակցությունը մնում է անավարտ, որովհետև չի օգտագործված գոյական անունը անձի նշանակությամբ։ Օրինակ՝ սրամիտ տղա (բնությունից)։

Սրամիտ զգեստ, սրամիտ ջրաղաց զուգորդումները ձևակցություն չեն կազմում, որովհետև նրանք ստացված են անհատական-իրադրական տվյալ կապի հիման վրա, որը հնարավոր է, նաև հասկանալի է տվյալ պայմաններում։ Բայց սրանք անհատական օգտագործման արդյունք են, ճիշտ այնպես, ինչպես սպիտակ լոռություն, կապույտ առավոտ զուգորդումները։

Ինչպես տեսանք, այդ կապը մեզ հետաքրքրում է՝ կախված ձևակցության բավարարվածությունից և ավարտվածությունից։

Այսպիսով, ածականի շարահյուսական զուգորդելիության տակ մենք հասկանում ենք վերջինիս՝ գոյականի այն որոշակի իմաստա-քերականական դասերի հետ ստույգ կառուցվածքային կապերի մեջ մտնելու հնարավորությունը, որոնք կատարում են շրջապատի ֆունկցիա։ Նման ֆունկցիա կատարող գոյականները բաժանվում են հետևյալ իմաստային խմբերի.

1 Անձ— գոյական անուն (գ. ա.)— մարդ, տղա

2. Կենդանի—գոյական կենդանի (դ. կ.)—ուլիկ, շուն

3. Նյութական առարկա— գոյական նյութական առարկա (գ. ն. ա.)— տուն, քար

4. Վերացական առարկա— գոյական վերացական առարկա (գ. վ. ա.)— ձայն, ենթադրություն։

Հայերենի դեպքում, իհարկե, գոյականը ամենից առաջ բաժանվում է երկու մեծ խմբերի՝ անձ և ոչ անձ. որից հետո գոյականի ոչ անձ խումբը իր հերթին բաժանվում է շնչավոր և անշունչ առարկաներ նշանակող գոյականների խմբերի, իսկ վերջինս՝ նյութական և ոչ նյութական առարկաներ անվանող գոյականի խմբերի։ Ստացվում է հետևյալ ստորադասական հարաբերությունների սխեման՝

Որպեսզի պարզենք, թե ժամանակակից հայերենում քանի՞ տիպի ձևակցություն է հնարավոր ածականի՝ գոյականի չորս իմաստային խմբերի հետ զուգորդվելու դեպքում, կարելի է օգտագործել Նյուտոնի երկանդամի բանաձևը[8]։ Զուգորդվող (նշանակիր) անդամը նշանակելով m-ով, զուգորդվող (ոչ նշանակիր) անդամը՝ m̄-ով, կստանանք

$$(m + \bar{m})^4 = m^4 + 4m^3\bar{m} + 6m^2\bar{m}^2 + 4m\bar{m}^3 + \bar{m}^4.$$

Բանաձևը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում կա 4 տիպի ձևակցություն՝ միատիպ զուգորդելիությամբ, 6 տեսակի ձևակցություն՝ երկտիպ զուգորդելիությամբ, 4 տեսակի ձևակցություն՝ եռատիպ զուգորդելիությամբ և, վերջապես, մեկ տեսակ ձևակցություն՝ քառատիպ զուգորդելիությամբ։ Չհաշվելով այն դեպքը, երբ ածականը օգտագործվում է անկախ (գոյականաբար), ժամանակակից հայերենի համար մենք կունենանք ածականի զուգորդելիության 15 տեսակ ձևակցություն։

Ած.— գ. ա.— շիկահեր տղա
Ած.— գ. կ.— խեթկան կով
Ած.— գ. ն. ա.— դյուրահալ մետաղ
Ած.— գ. վ. ա.— աղեկտուր, սրտաճմլիկ ձայն
Ած.— գ. ա., դ. կ.— մրսկան երեխա, ուլիկ
Ած.— գ. ա., գ. ն. ա.— հաստափոր մարդ, գիրք
Ած.— գ. կ., գ. ն. ա.— սրատամ շնաձուկ, պատառաքաղ
Ած.— գ. կ., գ. վ. ա.— թեթևաթռիչ թևեր, միտք
Ած.— գ. ն. ա., գ. վ. ա.— համաչափ հատված, դասակարգում
Ած.— գ. ա., գ. կ., գ. ն. ա.— մազոտ մարդ, կապիկ, ձեռքեր
Ած.— դ. ա., գ. կ., գ. վ. ա.— կատաղի թշնամի, գազան, զայրույթ
Ած.— գ. ա., գ. ն. ա., գ. վ. ա.— ազնիվ մարդ, աչքեր, ծառայություն
Ած.— դ. կ., դ. ն. ա., գ. վ. ա.— լեռնային քաղաք, կաքավ, քամի

---

8 Զուգորդումների քանակը և տիպերը հաշվելու ստորև կիրառվող եղանակը առաջարկված է Գ. Բ. Ջահուկյանի կողմից՝ նրա «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» գրքում, Երևան, 1969 և «О соотношении лингвистических единиц и их различных признаков» (Сб. «Теоретические и практические вопросы преподавания иностранных языков», М., 1970).

Ած.— գ. ա., դ. կ., դ. ն. ա., գ. վ. ա.— լավ մարդ, ձի, տուն, ենթադրություն

Ած.— դ. ա., դ. վ. ա.— հիմար մարդ, դատողություն։

Ածականի իմաստային խումբ	Գոյականի իմաստային խումբ			
	անձ	կենդանի	նյութական առարկա	վերացական առարկա
1. Ած.—դ. ա., դ. կ., դ. ն. ա., գ. վ. ա.	+	+	+	+
2. Ած.—դ. ա., դ. կ., դ. ն. ա.	+	+	+	—
3. Ած.—դ. ա., դ. կ., դ. ն. ա.	+	+	—	+
4. Ած.—դ. ա., դ. ն. ա., դ. վ. ա.	+	—	+	+
5. Ած.—դ. կ., դ. ն. ա., դ. վ. ա.	—	+	+	+
6. Ած.—դ. ա., դ. կ.	+	+	—	—
7. Ած.—դ. ա., դ. ն. ա.	+	—	+	—
8. Ած.—դ. ա., դ. վ. ա.	+	—	—	+
9. Ած.—դ. ն. ա., դ. վ. ա.	—	—	+	+
10. Ած.—դ. կ., դ. վ. ա.	—	+	—	+
11. Ած.—դ. կ., դ. ն. ա.	—	+	+	—
12. Ած.—դ. ա.	+	—	—	—
13. Ած.—դ. կ.	—	+	—	—
14. Ած.—դ. ն. ա.	—	—	+	—
15. Ած.—դ. վ. ա.	—	—	—	+
16. Ածական	—	—	—	—

Այս ձևակցությունները ժամանակակից հայերենում քանակական տեսակետից տարածված են ոչ հավասարապես։ Ժամանակակից հայերենի համակարգում մեծ տարածում ունեն այն ածականները, որոնք զուգորդվում են վերացական և անձի իմաստ ունեցող գոյականների և նյութական ու վերացական առարկա նշանակող գոյականների հետ։ Ավելի քիչ են այն ածականները, որոնք զուգորդվում են կենդանի և նյութական առարկայի իմաստ ունեցող գոյականների հետ։ Քանի որ ածականների մեծ մասը ածանցված է, ուստի զուգորդման հիմնական գործոնը համարվում է ածանցվող հիմքի իմաստը։ Ածանցված ածականների զուգորդումների հիմնական գործոնը պարզաբանելու համար կատարվում է ձևակցության փոխակերպական վերլուծություն։ Ինչպես հայտնի է, փոխակերպումը ելակետային կառուցվածքի բաղադրիչների ներքին կերպարանափոխման անհրաժեշտությունն է՝ համաձայն վաղօրոք տրված կանոնների։ Այստեղ մենք հաստատում ենք հետևյալ կանոնները՝

1. «Ածական-գոյական» ձևակցությունը փոխակերպվում է այնպիսի կառույցի, որ բաղկացած է «ածանցվող հիմք—շրջապատ» բաղադրիչներից։

2. Փոխակերպումը թույլ է տալիս մեջ բերելու որոշ բառեր, նախդիրներ և այլն։

Եթե ձևակցությունը «արձագանքում է» փոխակերպմանը, այսինքն՝ կազմում է իմաստավորված կապակցություն, այդ դեպքում զուգորդման հիմնական գործոնը դառնում է ածականի ածանցվող հիմքի իմաստը։ Իսկ եթե նշված ձևակցությունը «չի արձագանքում» փոխակերպմանը, ապա զուգորդելիության հիմնական գործոնը դառնում է հենց ածականի զուգորդումը՝ կավաթող— հող կավի հետ միասին (կավախառն հող), մազոտ մարդ (ժպիտ)— մարդ (ժպիտ), որը ծածկված է մազերով։

Այստեղ փոխակերպման կենթարկվի միայն անձի իմաստ ունեցող գոյական պարունակող զուգորդումը։ Իսկ վերացական իմաստ ունեցող գոյական-

ներ պարունակող զուգորդումները փոխակերպման չեն ենթարկվում, այսինքն՝ չեն կազմում իմաստավորված կապակցություն՝ «ժպիտ, որ ծածկված է մազով» կապակցությունը հնարավոր չէ։

Ածականի զուգորդվելը անձ ցույց տվող գոյականի հետ կապված է նրա ածանցվող հիմքի բնույթի հետ։

Փոխակերպման դեպքում բարձրանում է նաև փոխակերպի (տրանսֆորմի) և ձևակցության համարժեքության հարցը։ Այսպես, օրինակ, հետևյալ փոխակերպման մեջ՝ ես մոտեցա նրան— նա ինձ մոտ էր կատարվում է իմաստային կենտրոնի, այսպես ասած, տեղափոխություն «մոտեցա» բայից դեպի «մոտ» ածականը։

Կարևոր խնդիրներից մեկն էլ ածականի վերլուծությունն է զուգորդելիության տեսակետից՝ ըստ նրա ձևաբանական կառուցվածքի։ Ածականները ժամանակակից հայերենում լինում են պարզ կամ արմատական, ածանցավոր և բարդ։

Ածականները կազմվում են՝ ա) գոյականներից, օրինակ՝ բարեհնչյուն երգ, բ) բայերից, ընդ որում բայը իբրև ածանցվող հիմք որոշում է ածականի զուգորդելիությունը գոյականի որևէ իմաստային խմբի հետ. օրինակ՝ տարբերակիչ հատկություն, գ) ածականներից, օրինակ՝ տեղյակ-անտեղյակ մարդ։ Եթե ածականը բարդ է, ապա վերջինիս զուգորդելիության օրինաչափությունները կախված են նրա բաղադրիչ մասերի յուրահատկություններից։

Ածականի զուգորդելիությունը գոյականի հետ պայմանավորված է նրա իմաստային և բառակազմական հատկություններով։ Այդ պատճառով ձևակցությունների բացահայտումը և բնորոշումը անմիջականորեն կապված է գոյականի իմաստային խմբերի տարբերակման հետ, որ իր հերթին պահանջում է ածականի բառակազմական վերլուծություն։ Ստացվում է կախումների շղթա՝ զուգորդելիություն—իմաստաբանություն—բառակազմություն։

Այսպիսով, ածականի շարահյուսական զուգորդելիության ուսումնասիրությունը շրջապատի վերլուծության ճանապարհով հնարավորություն է տալիս ժամանակակից հայերենում բացահայտել ածականական ձևակցություններ, նկարագրել դրանց տիպերը, բացատրել գոյականի հետ ածականի զուգորդման որոշիչ գործոնները և այլն։

О СЕМАНТИЧЕСКОЙ СОЧЕТАЕМОСТИ ИМЕН ПРИЛАГАТЕЛЬНЫХ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Э. С. АВЕТИСЯН

Резюме

В исследовании имени прилагательного в плане сочетаемости исходным является его избирательное свойство. Семантико-синтаксическая сочетаемость имен прилагательных изучается в конфигурации, которая состоит из прилагательного как ядра и его окружения—существительного. В армянском языке имеются 15 типов подобных конфигураций.

Семантико-синтаксическая сочетаемость прилагательного обусловлена словообразовательными особенностями, поэтому выявление и характеристика конфигураций, неразрывно связанных с выявлением семантических групп внутри данного класса, в свою очередь связаны с анализом их словообразовательной структуры, что ведет к цепи зависимостей: сочетаемость—семантика—словообразование.